

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՂԻՄ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Զեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Զեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճևաքուղքը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճևաքուղքը: Պատասխանների ճևաքուղքի ճիշտ լրացումից է կախված Զեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Ո՞ր բույսն ունի առանցքային արմատային համակարգ.

- 1) սոխը
- 2) ձմերուկը
- 3) մորին
- 4) եղիպտացորենը

2

Հետևյալ օրգանիզմներից ո՞րն է պատկանում նախակորիզավորների վերնաբազավորությանը.

- 1) բալանտիդիումը
- 2) անաբենան
- 3) քլամիդոննաղը
- 4) պլկրոկուլը

3

Ո՞ր միջատներն են զարգանում լրիվ կերպարանափոխությամբ.

- 1) խավարասերները
- 2) մորեխները
- 3) ծղրիդները
- 4) մրջյունները

4

Թժարկված կենդանիներից ո՞րն է պատկանում կլոր որդերի տիպին.

- 1) սրատուտը
- 2) էլինոկուլը
- 3) խոզի երիզորդը
- 4) եղան երիզորդը

5

Մողեսի ողնաշարի ո՞ր բաժնի ողերն են կրում կողեր.

- 1) սրբանային և պոչային
- 2) կրծքային և գոտկային
- 3) պարանոցային և կրծքային
- 4) գոտկային, սրբանային, պոչային

6

Ո՞ր օրգաններն են մասնակցում սեռահասուն գորտերի շնչառությանը.

- 1) բոքերը և մաշկը
- 2) խոհկները և բոքերը
- 3) տրախեաները և մաշկը
- 4) խոհկները և տրախեաները

7

Ո՞ր հորմոններն են բարձրացնում գլյուկոզի քանակն արյան մեջ.

- 1) գլյուկագոնը և ադրենալինը
- 2) ինսուլինը և ադրենալինը
- 3) ինսուլինը և գլյուկագոնը
- 4) թիրօքսինը և ինսուլինը

8

Ի՞նչ գործառույթ է իրականացնում բիբը մարդու օրգանիզմում.

- 1) գույնի ընկալման
- 2) լույսի ճառագայթների տարրերակման
- 3) լույսի ճառագայթների քանակի կարգավորման
- 4) լուսային ազդակի փոխակերպման նյարդային գրգիռի

9

Մարդու ո՞ր ուսկորներն են միացած սերտաճման միջոցով.

- 1) գանգի քունքային և ծոծրակային ուսկորերը
- 2) ողնաշարի սրբանային բաժնի ողերը
- 3) ողնաշարի գոտկային բաժնի ողերը
- 4) վերին և ստորին ծնոտները

10

Մարդու օրգանիզմում ինչի՞ միջոցով է տեղի ունենում նյութափոխանակության արգասիքների հեռացումն արյունից.

- 1) միզուկի
- 2) նեֆրոնի
- 3) միզապարկի
- 4) միզածորանների

11

Ո՞ր վիտամինների անբավարարությունն է հանգեցնում մարդու տեսողության վատքարացմանը.

- 1) D և B₁₂
- 2) C և A
- 3) A և B₂
- 4) C և B₁

12

Մարդու մարսողական համակարգի ո՞ր օրգանում է սկսվում օսլայի մարսումը.

- 1) լայնակի խթաղիում
- 2) բարակ աղիում
- 3) բերանի խոռոչում
- 4) ստամոքսում

13

Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում միջավայրում ջերմաստիճանի անկման դեպքում.

- 1) մաշկի արյան անոթները լայնանում են, արյան հոսքը արագանում է, մարմնի ջերմաստվությունը մեծանում է
- 2) ածում է արյան հոսքը դեպի մաշկ, իսկ մարմնի ջերմաստվությունը նվազում է
- 3) լայնանում են մաշկի արյան անոթները և մեծանում է այնտեղ մղվող արյան քանակը
- 4) նեղանում են մաշկի մազանոթների լուսածերպերը, նվազում է մարմնի ջերմաստվությունը

14

Ո՞ր պնդումն է սխալ թրոմբինի վերաբերյալ.

- 1) ֆերմենտ է
- 2) ազդում է ֆիբրինոգենի վրա
- 3) թրոմբինի թելիկներից ձևավորվում է թրոմբը
- 4) մասնակցում է արյան մակարդման գործընթացին

15

Որտե՞ղ է իրականանում զազափոխանակությունը մարդու օրգանիզմի և արտաքին միջավայրի միջև.

- 1) մանրագույն թրոմիխներում
- 2) բոքարշտերում
- 3) բոքային զարկերակներում
- 4) բոքային երակներում

16

Ինչպե՞ս են միմյանց միանում նուկլեոտիդներն ի-ՈՒՆԹ-ի մոլեկուլում.

- 1) մեկ նուկլեոտիդի ազոտական հիմքի և հարևան նուկլեոտիդի ֆոսֆորական թթվի միջոցով
- 2) մեկ նուկլեոտիդի ազոտական հիմքի և հարևան նուկլեոտիդի ածխաջրի միջոցով
- 3) մեկ նուկլեոտիդի ածխաջրի և հարևան նուկլեոտիդի ֆոսֆորական թթվի միջոցով
- 4) հարևան նուկլեոտիդների ազոտական հիմքերի միջոցով

17

Ի՞նչն է կատարում մատրիցայի դեր սպիտակուցի կենսասինթեզի դեպքում.

- 1) ԴՆԹ-ի մոլեկուլը
- 2) ռիբոսոմը, կորիզը
- 3) ԴՆԹ-ի մոլեկուլի շղթաներից մեկը, փ-Ո-ՆԹ-ն, ռ-Ո-ՆԹ-ի մոլեկուլը
- 4) ի-Ո-ՆԹ-ի մոլեկուլը

18

Ո՞ր բջիջներում հատիկավոր էնդոպլազմային ցանցը լավ զարգացած չէ.

- 1) ձվարջիջներում և ենթաստամոքսային գեղձի բջիջներում
- 2) բբագեղձերի և ենթաստամոքսային գեղձի բջիջներում
- 3) սեռական բջիջներում և բբագեղձերի բջիջներում
- 4) ձվարջիջներում և սաղմնային բջիջներում

19

Թաղանքային կառուցվածք չունեցող օրգանիզմների թվին են պատկանում.

- 1) լիզոսոմներն ու վակուոլները
- 2) ռիբոսոմներն ու միտոքոնոքլիումները
- 3) Գոլջիի ապարատն ու ռիբոսոմները
- 4) ռիբոսոմներն ու բջջային կենտրոնը

20

Ո՞ր հատկանիշն ունի ռեակցիայի նեղ նորմա.

- 1) աչքերի գույնը
- 2) սերմերի զանգվածը
- 3) բույսի բարձրությունը
- 4) կովերի կաթնատվությունը

21 **Ո՞ր օրգաններն են առաջանում էնտոդերմից սաղմնային զարգացման ընթացքում.**

- 1) միզածորանները, գլխուղեղը, լսողության օրգանները
- 2) զգայարանները, նյարդերը, թոքերը, մաշկի էպիթելիլ
- 3) մկանները, նյարդերը, աղիները, երիկամները
- 4) աղիների, խոհիկների և թոքերի էպիթելիլ

22 **Ե՞րբ են քրոմոսոմները կազմված լինում մեկ քրոմատիդից.**

- 1) ինստերֆազի վերջում
- 2) միտոզի պրոֆազի սկզբում
- 3) միտոզի անաֆազի վերջում
- 4) միտոզի մետաֆազի սկզբում

23 **Ո՞րն է անսեռ բազմացման օրինակ.**

- 1) կուսածնությունը
- 2) կրկնակի բեղմնավորումը
- 3) բույսերի զարգացումը սերմից
- 4) հիդրայի բազմացումը բողբոջմամբ

24 **Ինչպե՞ս են անվանում տվյալ տեսակին պատկանող օրգանիզմների քրոմոսոմների հապլոիդ հավաքի ԴՆԹ -ի մոլեկուլների ամբողջությունը.**

- 1) գենում
- 2) գենոտիպ
- 3) ֆենոտիպ
- 4) գենոֆոնի

25 **Գ.Սեմդելի ձևակերպած ո՞ր օրենքն է պնդում, որ առաջին սերմի հիբրիդների խաչասերման կամ ինքնափոշոտման արդյունքում առաջացած առանձնյակների $1/4$ -ն ունենում է ռեցտակ հատկանիշ, $3/4$ -ը՝ դոմինանտ հատկանիշ.**

- 1) ճեղքավորման օրենքը
- 2) միակերպության օրենքը
- 3) զամետների մաքրության օրենքը
- 4) հատկանիշների անկախ բաշխման օրենքը

26 **Ի՞նչ է գեների կոմպլեմենտար ազդեցությունը.**

- 1) շղթայակցված գեների փոխներգործություն
- 2) տարրեր ալելային գույգերի փոխներգործություն
- 3) միևնույն ալելային գույգի երկու գեների փոխներգործություն
- 4) գերդոմինանտությունը պայմանավորող գույգերի փոխներգործություն

27

Քանի՞ տիպի գամետ կառաջացնի գորշ մարմնով և նորմալ զարգացած թևերով եղ հետերոզիզոտ դրոզոֆիլը, եթե դոմինանտ գեներն իրար են շղթայակցված, իսկ ռեցեսիվները՝ իրար, և հոմոլոգ քրոմոսոմների միջև տրամախաչում չկա:

- 1) մեկ
- 2) երկու
- 3) չորս
- 4) ութ

28

Շղթայակցման բացակայության դեպքում ինչպիսի՞ հարաբերությամբ $AaBb$, $aaBb$, $Aabb$, $aabb$ գենոտիպով առանձնյակներ կստացվեն, եթե խաչասերվեն $AaBb$ և $AaBb$ գենոտիպով առանձնյակներ.

- 1) 1:2:1
- 2) 1:1:1:1
- 3) 4:2:2:1
- 4) 9:3:3:1

29

Ո՞րք համակցական փոփոխականության պատճառ չէ.

- 1) մեյոզի առաջին բաժանման պլոֆազում դիտվող քրոմոսոմների հնարավոր տրամախաչումը
- 2) բեղմնավորման ժամանակ գամետների պատահական զուգակցումը
- 3) մեյոզի առաջին բաժանման անաֆազում հոմոլոգ քրոմոսոմների պատահական տարամիտումը
- 4) դրամիկացիայի ժամանակ կարճ նույնականացնելու հատվածների երկարացումը

30

Ե՞րբ է սովորաբար առաջանում պոլիպոլիդ քջիզը.

- 1) գենային մուտացիաների արդյունքում
- 2) քրոմոսոմի որևէ հատվածի 180° անկյան տակ պտույտի արդյունքում
- 3) քրոմոսոմի մի մասի՝ նրան ոչ հոմոլոգ քրոմոսոմի վրա տեղափոխման արդյունքում
- 4) քջի բաժանման ժամանակ քրոմոսոմների տարամիտման խանգարման արդյունքում

31

Ո՞ր նյութն է կենսահանքային.

- 1) օվկիանոսի ջուրը
- 2) կրային ապարը
- 3) քարածուխը
- 4) երկնաքարը

32

Միջտեսակային փոխարարերությունների ո՞ր ձևի օրինակ է քարաքոսը.

- 1) մուտուալիզմի
- 2) կոռպերացիայի
- 3) կոմենսալիզմի
- 4) մակաբուծության

33

Նշվածներից ո՞րն է զուգահեռության արդյունք.

- 1) դելֆինների և շնաձկների մարմնի շրջհոսելի ձևը
- 2) կետանմանների և թիառտների վերջույթների նմանությունը
- 3) խորտիկ և իշախառանչ արջուկի վերջույթների նմանությունը
- 4) կոլիքրիկ և իլիկաթիթեռի բերանային ապարատների նմանությունը

34

Ինչի՞ արդյունքում կարող է տեղի ունենալ նոր տեսակների առաջացում նախկին արեալի ներսում նույն տեսակի պոպուլյացիաներից.

- 1) կոնվերգենցիայի
- 2) էկոլոգիական մեկուսացման
- 3) աշխարհագրական մեկուսացման
- 4) մոդիֆիկացիոն փոփոխականության

35

Ո՞ր օրգանիզմները պլոդուցենտներ չեն.

- 1) քեմոսինթեզող բակտերիաները
- 2) նիտրիֆիկացնող բակտերիաները
- 3) կապտականաչ ջրիմուռները
- 4) գլխարկավոր սնկերը

36

Ի՞նչն է էկոհամակարգի առաջնային արտադրանքը.

- 1) կոնսումենտների կենսագովածի աճը միավոր ժամանակում
- 2) հետերոտրոֆների կենսագովածի աճը միավոր ժամանակում
- 3) պլոդուցենտների կենսագովածի աճը միավոր ժամանակում
- 4) էկոհամակարգի կենսագովածի առաջացման արագությունը

(37-38) Խաչասերել են աaBBCcDdEeFf x AaBbCCDDeeFf գենոտիպերով առանձնյակներ: Ալելային գեների առաջին երկու զույգերում առկա է լրիվ դոմինանտուրյուն, իսկ վերջին չորսում՝ ոչ լրիվ: Տվյալ հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարբեր զույգերում:

37

Գտնել սերնդում հնարավոր գենոտիպերի թիվը.

- 1) 48
- 2) 64
- 3) 96
- 4) 32

38

Գտնել սերնդում հնարավոր ֆենոտիպերի թիվը.

- 1) 48
- 2) 24
- 3) 96
- 4) 32

(39-40) Ծածկասերմ բույսի առէջներից մեկում առաջացել է 2000000 փոշեհատիկ:

39

Քանի՞ սպերմիումներ են դրանք պարունակում.

- 1) 8000000
- 2) 1000000
- 3) 2000000
- 4) 4000000

40

Քանի՞ վեգետատիվ թղիջ են դրանք պարունակում.

- 1) 8000000
- 2) 1000000
- 3) 2000000
- 4) 4000000

41

Կենդանու ո՞ր տեսակին (նշված է աջ սյունակում) ո՞ր կառուցվածքային առանձնահատկությունն է համապատասխանում (նշված է ձախ սյունակում): Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

Կառուցվածքային
առանձնահատկությունը

Կենդանու տեսակը

- A. քլորոպլաստ
- B. երկու կորիգ
- C. ավտոտրոֆ սնուցում
- D. թարթիչների առկայություն
- E. լուսազգայուն աչիկի առկայություն
- F. կեղծ ոսիկներ

- 1. հողաթափիկ ինֆուզորիա
- 2. սովորական ամերիա
- 3. կանաչ էվզլենա

42

Ո՞ր նյարդային կենտրոնը (նշված է ձախ սյունակում) մարդու կենտրոնական նյարդային համակարգի ո՞ր տեղամասում է (նշված է աջ սյունակում) գտնվում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Նյարդային կենտրոն

Կենտրոնական նյարդային
համակարգի տեղամաս

- A. հռտառական գոտի
- B. զերմակարգավորման կենտրոն
- C. կմախքային մկաններին ազդակներ ուղարկող գոտի
- D. տեսողական ճանաչողության գոտի
- E. լույսի նկատմամբ կողմնորոշման ռեֆլեքսի կենտրոն
- F. քաղցի և ծարավի զգացողության կենտրոն
- G. ձայնի նկատմամբ կողմնորոշման ռեֆլեքսի կենտրոն

- 1. եմբառեսարումք
- 2. մեծ կիսագնդերի կեղևի ծոծրակային բիլք
- 3. միջին ուղեղ
- 4. մեծ կիսագնդերի կեղևի ճակատային բիլք
- 5. մեծ կիսագնդերի կեղևի բունքային բիլք

43

Կրկնակի բեղմնավորման արդյունքում ծաղկավոր բույսի ո՞ր մասից (նշված է ձախ մասում) ի՞նչ է զարգանում (նշված է աջ մասում): Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

- | | |
|-----------------------------------------------------------|-----------------|
| A. սաղմնապարկից | 1. պտղապատը |
| B. վարսանդի սերմնարանից | 2. բույսի սաղմը |
| C. սաղմնապարկի պատից | 3. էնդոսպերմը |
| D. կենտրոնական բջջի և սպերմիումներից
մեկի միաձուլումից | 4. սերմը |
| E. զիգոսից | 5. պտուղը |
| F. սերմնարանի պատից | 6. սերմնամաշկը |

44

Ո՞ր օրգանական միացությունը (նշված է ձախ սյունակում) մոլեկուլի ո՞ր կառուցվածքին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրգանական միացություններ

Մոլեկուլի կառուցվածքը

- | | |
|-------------|------------|
| A. էրիթրոզ | 1. մոնոմեր |
| B. ակտին | 2. պոլիմեր |
| C. մեթիոնին | |
| D. գլյուկոզ | |
| E. մանան | |
| F. կոլագեն | |
| G. ի-Ո-ՆԹ | |
| H. միոզին | |

45

Ինչպիսի՞ համապատասխանություն գոյություն ունի էվոլյուցիոն փոփոխությունների (նշված է ձախ սյունակում) և էվոլյուցիայի ուղիների (նշված է աջ սյունակում) միջև։ Նշել համապատասխանություններն ըստ հերթականության։

Էվոլյուցիոն փոփոխություն

- A. բույսերի փոշոտումը քամու միջոցով
- B. գաղճ բույսի տերևների բացակայությունը
- C. տաքարյունության առաջացումը
- D. բույսերում սերմերի առաջացումը
- E. քրդավորների քառախորշ սրտի առաջացումը
- F. ձիերի սմբակների առաջացումը
- G. հավերժական սառույցներում բակտերիաների կենսունակությունը
- H. ժապավենաձև որդերի մարսողական համակարգի հետզարգացումը

Էվոլյուցիայի ուղիներ

- 1. արոմորֆոզ
- 2. ընդհանուր դեգեներացիա
- 3. իդիոադապտացիա

46

Ինչպիսի՞ն է արյան հաջորդական ուղին ձկների արյունատար համակարգում՝ սկսած սիրտ մտնելու պահից։ Նշել ճիշտ հաջորդականությունը.

- 1. փորային առտա
- 2. դեպի սիրտ տանող երակներ
- 3. մեջքային առտա
- 4. նախասիրտ
- 5. խոիկային թերթիկների մազանոթներ
- 6. ներքին օրգանների մազանոթներ
- 7. փորոք

47

Չոր սնունդ ընդունելիս ինչպիսի՞ն է համի զգացողության ձևավորման գործընթացների հաջորդականությունը մարդու օրգանիզմում։ Նշել ճիշտ հաջորդականությունը.

- 1. քիմընկալիչների դրդում
- 2. նյարդային ազդակների հաղորդում մեծ կիսագնդերի կեղև
- 3. թքազատության ուժեղացում
- 4. համի զգայության ձևավորում
- 5. կենտրոնաձիգ նյարդերով նյարդային ազդակների հաղորդում երկարավուն ուղեղ
- 6. սննդի բաղադրիչների լուծում քրում
- 7. բերանի խոռոչի մեխանըմկալիչների գրգռում չոր սնունդի հետ շփվելիս

48

Ի՞նչ հաջորդական պրոցեսներից է կազմված մարդու շնչառությունը: Նշել ճիշտ հաջորդականությունը՝ սկսելով ներշնչման պրոցեսի սկզբից.

1. կողոսկրերի բարձրացում
2. մթնոլորտային օդի անցում շնչափող
3. կրծքավանդակի ծավալի մեծացում ուղղաձիգ ուղղությամբ
4. գազափոխանակություն թոքերում
5. կրծքավանդակի ծավալի փոքրացում
6. արտաշնչում
7. միջկողային մկանների բուլացում
8. ստոծանու գմբեթների իջեցում
9. միջկողային մկանների կծկում

49

Երկրորդային սեռական հատկանիշի զարգացման ժամանակ ի՞նչ հաջորդականությամբ են մարդու օրգանիզմում տեղի ունենում նշված գործընթացները.

1. կոկորդի և ձայնալարերի աճ
2. արյան մեջ արական սեռական հորմոնի քանակության ավելացում
3. ձայնալարերի տատանման հաճախականության նվազում
4. ենթատեսաթմբում նեյրոհորմոնների սինթեզ
5. սերմնարանում հորմոնի սինթեզի խթանում
6. մակուղեղի գործառույթի խթանում

50

Ինչպիսի՞ն է պրոցեսների հաջորդականությունը բույսերի օրգանիզմում սպիտակուցի մոլեկուլի առաջացման ժամանակ.

1. սպիտակուցի տարածական կառուցվածքի առաջացում
2. ջրի և անօրգանական աղերի ներծծում արմատի միջոցով
3. ամինաթթուների միջև ջրածնային կապերի առաջացում
4. ամինաթթուների սինթեզ՝ անօրգանական նյութերից
5. ամինաթթուների միջև պեպտիդային կապերի առաջացում
6. հիդրոֆոր և -S-S- կովալենտ կապերի առաջացում

51

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները՝ բակտերիաֆազով բակտերիայի վարակման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. բակտերիայի ոչնչացում
2. բակտերիաֆազի **ԴՆԹ-**ի ներարկում բակտերիայի մեջ
3. պոչային ելունների ամրացում բջջաբաղանքին
4. բակտերիաֆազի սպիտակուցների սինթեզ
5. բջջաբաղանքի «լուծում»
6. նոր բակտերիաֆազերի ձևավորում
7. բակտերիաֆազի **ԴՆԹ-**ի սինթեզ

52

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում սպերմատոզենեզի գործընթացները:
Նշել ճիշտ հերթականությունը.

1. կրկնակի քրոմատիդներից կազմված քրոմոսոմների հապլոիդ հավաքակազմով բջիջների առաջացում
2. դիպլոիդ բջիջների բաժանում՝ միտոզով և սկզբնական սեռական բջիջների բվի ավելացում
3. առաջին կարգի սպերմատոցիտների առաջացում
4. սպերմատոզոփիդների ձևավորում
5. բջիջների աճ, ԴՆԹ-ի կրկնապատկում
6. կոնյուգացիա և տրամախաչում
7. սպերմատիդների առաջացում

53

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.

1. կոկորդի ներքին պատը պատված է թարթիչավոր ծածկութային հյուսվածքով
2. վահանաձև գեղձի գերգործառույթի դեպքում զարգանում է կրետինիզմ
3. միջին ականջում ասպանդակը հավում է կլոր պատուհանի թաղանթին
4. լսողական ընկալիչները գտնվում են կորտան օրգանում
5. միջին ականջը հեղուկով լցված փոքրիկ խոռոչ է
6. երկարավուն ուղեղի շնչառության կենտրոնում մոտավորապես չորս վայրկյանը մեկ առաջանում են գրգիռներ, որոնք հաղորդվում են միջկողային մկաններին և ստոծանուն

54

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. պոլիա հիդրան հերմաֆրոդիտ է, անբարենպաստ պայմաններում բազմանում է սեռական եղանակով
2. թռչունների թռիչքի ժամանակ գազափոխանակությունը տեղի է ունենում թռերում և օդապարկերում
3. բնակալ թռչունները սովորաբար ավելի շատ ձվեր են դնում, քան բնախույսները
4. կաթնասուններն ունեն աղրտայի միայն աջ աղեղ, որը դուրս է զալիս ձախ փորոքից
5. բորբոսասնկերը սապրոֆիտ են
6. պտերներն ունեն արմատ, ծաղիկ, տերև, ցողուն
7. մողեսի միզածորանները բացվում են կոյանոցի մեջ

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. Չրում ճարպերն առաջացնում են լիպոսմներ, որոնք ջրով լցված լիպիդային երկերտ կառույցներ են
2. քրոնատիմը ԴՆԹ-ի, հիստոնային և ոչ հիստոնային սպիտակուցների համալիր է
3. ԴՆԹ-ի մեկ շղթայում աղենինային նուկլեոտիդի քանակը միշտ հավասար է թիմինային նուկլեոտիդի քանակին
4. քլորոֆիլը հիմնականում կլանում է կանաչ և կապտամանուշակագույն գույները, իսկ կարմիրն անդրադարձնում է, որի պատճառով բույսերը հիմնականում կանաչ գույն ունեն
5. Այութերի տեղափոխությունը բարձր խտությունից դեպի ցածրն, այսինքն ըստ գրադիենտի, կոչվում է պասիվ փոխադրում, և այն արտաքին էներգիայի ծախս չի պահանջում
6. բակտերիաներն ունեն քլորոպլաստներ, որտեղ քլորոֆիլի փոխարեն հանդիպում է բակտերիոքլորոֆիլը և այլ ֆոտոսինթետիկ գունակներ

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

1. Ճարպերը մասնակցում են մարդու մակերիկամների հորմոնների կենսասինթեզին
2. մակերիկամի կեղևային շերտի հորմոն աղբենայինը բարձրացնում է արյան ճնշումը, նպաստում է արյան մեջ գլյուկոզի առաջացմանը
3. Ենթամաշկային քջանքը պաշտպանում է մարմինը սառեցումից՝ փոքրացնելով շերմատվությունը
4. մակուղեղը և մակերիկամի կեղևային շերտը իրականացնում են միզագոյացման հումորալ կարգավորումը
5. ավիշը տարբերվում է արյան պլազմայից սպիտակուցի ավելի քիչ պարունակությամբ
6. պասիվ արիեստական իմունիտետն առաջանում է, եթե օրգանիզմ են մտցնում տվյալ հիվանդության բուլացած կամ մահացած հարուցիչները
7. Քքում պարունակվող անօրգանական նյութերից են իմունոգլոբուլինները, լիզոցիմը, ինտերֆերոնը

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. ազրուկոհամակարգերն օժտված են ինքնակարգավորմամբ, դոմինանտ տեսակները բնական ընտրության արդյունք են
2. մրցակցությունը, գիշատչությունը էկոլոգիական ոչ կենսածին գործոններ են
3. էկոլոգիական համակարգերում որպես ռեղուցենտրներ հանդես են գալիս որոշ միջատներ, սնկերը, բակտերիաները
4. նիտրիֆիկացնող բակտերիաներն ամոնիակը վերածում են ազոտային և ազոտական թթվի աղերի
5. տեսակի ֆիզիոլոգիական չափանիշի հիմքում ընկած է նրա առանձնյակների արտաքին և ներքին կառուցվածքի նմանությունները
6. սուկցեսիան, որը սկսվում է մերկ ժայռերի վրա, որտեղ բացակայում է հողը, կոչվում է առաջնային

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. կաթնասունների ծվարջիջներում դեղնուց գրեթե չկա, և տրոհումն ամբողջական է, առաջացած բլաստոմները հավասար են չափերով
2. վերլուծող խաչասերման դեպքում անհայտ գենոտիպ ունեցող առանձնյակը խաչասերում են ռեցեսիվ գենով հոմոզիգոտ առանձնյակի հետ
3. կրոսինգրվերի հետևանքով տեղի է ունենում քրոմոսոմների թվի կրկնակի պակասում
4. Պատառի սինդրոմը կապված է գենում նուկլեոտիդային հաջորդականության փոփոխության հետ
5. կատունների մարմնի գունավորումը X քրոմոսոմին շղթայակցված հատկանիշ է, և խայտարդես լինում են էզ կատունները
6. Սենդելի անկախ բաշխման օրենքը վերաբերում է միայն այն հատկանիշների ժառանգմանը, որոնց պայմանավորող գույզ ալելային գենները գտնվում են տարբեր գույզ հոմոլոգ քրոմոսոմներում

- (59-60) Ալիքաձև մազերը ստացվում են որպես միջանկյալ հատկանիշ, եթե ծնողներից մեկն ունենում է գանգուր մազեր, իսկ մյուսը՝ ուղիղ։ Ալիքաձև մազերով և արյան I խմբով տղամարդն ամուսնացել է ուղիղ մազերով և արյան IV խմբով կնոջ հետ։

59 Որոշել գանգուր մազերով երեխա ծնվելու հավանականությունը (%-ով)։

60 Որոշել ըստ տվյալ հատկանիշների երկինտերողիզոտ երեխա ծնվելու հավանականությունը (%-ով)։

Մեկ գրամ ջրի ջերմաստիճանը 1°C -ով բարձրացնելու համար անհրաժեշտ է $4,19 \Omega$ էներգիա: 100 կգ մարմնի զանգված ունեցող և ծանր ֆիզիկական աշխատանքով զբաղվող մարդու ծախսել է 14246 kJ էներգիա: Եթե չլինեին ջերմակարգավորման մեխանիզմները, և ընդունելով, որ այդ մարդու մարմնի ջերմաստիճանը 1°C -ով բարձրացնելու համար անհրաժեշտ է այնքան էներգիա, ինչքան 100 կգ ջրի համար, ապա այդ էներգիան քանի^o աստիճանով ($^{\circ}\text{C}$) կբարձրացներ մարդու մարմնի ջերմաստիճանը:

(62-64) Գլյուկոզի ճեղքումից հետո օրգանիզմում մնացել է 32 մոլ կաքսաքքու, և էներգիայի կորուստը կազմել է 15520 կՋոուլ: 1 մոլ գլյուկոզից մինչև կաքսաքքու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋոուլ, իսկ ԱԿՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոուլ/մոլ էներգիա:

62 Զանի^o մոլ CO₂ է առաջացել այդ ընթացքում:

63 Զանի^o կՋոուլ է կազմում էներգիայի կորուստը անբավարար փուլում:

64 Զանի^o կՋոուլ է կազմում էներգիայի կորուստը թթվածնային փուլում:

- (65-66) Օրվա ընթացքում մաշկի մակերևույթից ջերմաճառագայթմամբ հեռացել է 23520 կՎ էներգիա: Հայտնի է, որ մաշկի մակերևույթից ջերմաճառագայթման միջոցով հեռացվում է ավելցուկային ջերմային էներգիայի 60%-ը, գոլորշիացման միջոցով՝ 20%-ը, ջերմահաղորդման միջոցով՝ 15%-ը: Հաշվի առնել, որ 1 գ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՎ էներգիա:

65

Ընդամենը որքա՞ն ջերմային էներգիա է հեռացվել մաշկի մակերևույթով մեկ օրվա ընթացքում (կՎ-ով):

66

Քանի՞ մգ քրտինք է հեռացվել այդ ընթացքում 1սմ² մակերեսից, եթե մաշկի մակերեսը 1,6 մ² է:

- (67-68) Հարաբերականորեն հանգիստ վիճակում մարդու սիրտը մեկ րոպեի ընթացքում կծկվում է 75 անգամ: Ֆիզիկական աշխատանք կատարելիս կծկումների թիվն ավելանում է 30%-ով:

67

Քանի՞ րոպե են կծկվում փորոքները 16 ժամ հարաբերական հանգստի վիճակում:

68

Քանի՞ լիտր արյուն են մղում շրջանառության փորոքները մարդու 8 ժամ ֆիզիկական աշխատանք կատարելու ընթացքում: Ընդունել, որ յուրաքանչյուր կծկման ժամանակ փորոքը զարկերակ է մղում 65 մլ արյուն:

69

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Շիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը.

1. Երկփեղկ փականների ոչ լրիվ փակման հետևանքով փորոքից արյունը կարող է անցնել ձախ նախասիրտ
2. ողնուղեղի կրծքային հատվածների կողմնային եղջյուրներից ուղարկվող ազդակները դանդաղեցնում են սրտի աշխատանքը
3. կիսալուսնաձև փականները շարակցահյուսվածքային թելիկներով միացած են փորոքների պատերին
4. սրտի պատի ներքին շերտը կազմված է էպիթելային հյուսվածքից
5. կիսալուսնաձև փականներն արգելակում են արյան հետադարձ շարժումը թռքային զարկերակից և առրտայից դեպի սիրտ
6. ացետիլխոլինը, կալցիումի աղերը դանդաղեցնում են սրտի աշխատանքը

70

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Շիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը.

1. բջջում միտոքոնոֆիումներն անընդհատ շարժվում են և փոխում իրենց ձևը
2. միտոքոնոֆիումները բջջում կարող են առաջացնել ճյուղավորված ցանցեր
3. միտոքոնոֆիումները քիչ են լյարդի, սեռական գեղձերի բջջներում
4. միտոքոնոֆիումների արտաքին թաղանթը հարթ է, դրանում քիչ են ֆուֆոլիալիդները և շատ են սպիտակուցները
5. միտոքոնոֆիումներին բնորոշ է լիպիդների փոխանակությունը
6. միտոքոնոֆիումների ներքին թաղանթում տեղակայված ԱԵՖ - սինթազի միջով պրոտոնները միտոքոնոֆիումի ներքին թաղանթի ներքին մակերևույթից անցնում են ներքին թաղանթի արտաքին մակերևույթ